251D.

# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 380
Մարտ 19, 1991

Արժանաշնորհ
Տ. Կարապետ Քհնյ. Քոչաքեան
Հովիւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տէր Կարապետ,

Ստացուած են համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 1, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 17, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Դանիէլ Եղիա Քորաքեան
Քայի Ղազար Ղազարեան
Հուրիկ Չորէքճեան
Մուրատ Ճէնկոզեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնուի որ Ծխական Ժողովին ներկայացուած Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Հովիւին, Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ։

Կը շնորհաւորեմ Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթեմ որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Աղօթակից

Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան
Առաջնորդի Փոխանորդ